...ածել իր հայրենի երկրի, իր անցյալ ժողովրդի խոր վերքերը՝ ճնշումն ու թշվառությունը, կուլտուրական հետամնացությունը, և արվեստը այնպես դարձնել ժողովրդի լուսավորության ներգործուն միջոցներից մեկը: Աբովյանը երազում էր տեսնել իր ժողովրդի ծաղկուն կուլտուրան ու արվեստը, նրա զարթոնքը: Սակայն այդ նա չտեսավ:

Հայ ժողովրդի և նրա լավագույն զավակների դարավոր իղձերն ու երազանքները իրականացան միայն սովետական կարգերում: Իր դարավոր ճնշումից ազատագրված, Լենին-Ստալինի մեծագործ պարտիայի ղեկավարությամբ վերածնված հայ ժողովուրդն այսօր ապրում է իր գիտության ու արվեստի իսկական ոսկեդարի շրջանը և Սովետական Միության բազմազգ ստալինյան համերաշխ ընտանիքում նա գնում է դեպի իր լույս ապագան, դեպի կոմունիզմի վերջնական հաղթանակը:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

(Արվեստի վաստ. գործիչ)

# ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ

Սեպտեմբերի 22-ի երեկոյան բացվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի 7-րդ գիտական սեսիան՝ նվիրված մեծ դեմոկրատ-լուսավորիչ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակին:

Բացելով սեսիան, ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր պրոֆ. Մ. Մկրյանն ասաց.— Հայ նոր գրականության հիմնադիր, մեծ դեմոկրատ-լուսավորիչ Աբովյանը Անդրկովկասյան ողջ իրականության ամենափայլուն և լուսավորիչ դեմքերից մեկն է: Նա հայ նոր մանկավարժության հիմնադիրն է, խոշոր լեզվաբան և լեզվագետ, պատմաբան և ազգագրագետ, հրապարակախոս և հասարակական գործիչ: Այս բոլորով հանդերձ Աբովյանը առաջին նորությունները բերելով դառնում է հայ նոր գրականության հիմնադիրը: Աբովյանը [illegible] հաղթահարելով միջնադարի գրողների ստեղծագործական սահմանափակությունները, ստեղծեց նոր տեսակի գրականություն՝ դառնալով ուսուցիչ իր հետնորդների համար:

Ահա թե ինչու սովետական ժողովուրդը այսօր մեծագույն սիրով է հիշում Աբովյանին և անմահ պահում նրա անունը:

Այնուհետև զեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Ա. Ասատրյանը, որը բնութագրեց Աբովյանին որպես մեծ դեմոկրատ-լուսավորիչ:

Սեսիայի առաջին նիստն ավարտվեց Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի իդեական բովանդակության մասին ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Էդ. Թոփչյանի զեկուցումով:

Սեսիայի երկրորդ նիստը կայանալու է այսօր:

...վիճակը, հոգու դրսևորումը, նրա հմայիչ, զգայուն ներաշխարհի բացումը, նրա ոգևորման պատկերումը այնպես, որ նա կարդացվի առաջին հայացքից:

Այդ պետք է անել, խուսափելով կեղծ, մտացածին դրություններից — ճշմարիտ, կենսական պատկերացումով: Քանդակի միջոցներն են՝ դրա համար արձանի կեցվածքը, ֆիգուրի ամբողջական արտահայտչականությունը, ձեռքերի արտահայտությունը, դիրքը, ձեր, դիմագծերի պլաստիկան, որտեղ պետք է ավարտվի և խտանա արձանի հիմնական միտքը:

Արտաքին (ֆիզիկական) բուռն շարժումները ոչ մի կերպ չեն բնորոշում և չեն կարող համապատասխանել Աբովյանի կերպարին: Այդ պատճառով էլ անընդունելի է այդ կերպարը տալու համար շեշտը արտաքին շարժման վրա դնելը:

Աբովյանին նվիրված կոնկուրսային ցուցահանդեսի մի քանի քանդակներում՝ բուռն և խռովահույզ կերպար ստեղծելու համար հեղինակները շեշտը դրել են արտաքին շարժման վրա:



Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանը Քանաքեռում:

Ֆոտո՝ Նեմրուդի